ԱՎԴՈՒՌ, ՄՅՈՒՐԻՇԵՆ. ԵՐԵԿ, ԱՅՍՕՐ, ՎԱՂԸ

Ավդուտ եւ Մյուրիշեն գյուղերը գտնվում են Արցախի Մարտունու շրջանի հյուսիս-արեւմտյան սահմանագլխին: Մինչեւ վերջին երկու-երեք տարին այդ գյուղերը արտաքին աշխարհի հետ կապված էին միակ ճանապարհով, որը անցնում է հարեւան Աղդամի շրջանի Գիլափլու գյուղով:

Այժմ Ստեփանակերտ - Հարավ ճանապարհը երկարածգվել է մինչեւ Մյուրիշեն-Ավդուտ-Հացի-Մարտունի, սակայն անձրեւների ժամանակ ճանապարհը ցեխանում է եւ Ավդուտ, Մյուրիշեն գյուղերը մնում են կտրված արտաքին աշխարհից: Ավդուտ անունը հավանաբար ծագել է «Աղվանաց դուռ» անվանումից: Բացի այդ, Ավդուտը հարեւան է Հացի գյուղին, որտեղ գտնվում է Անահիտի աղբյուրը, որից, ըստ ավանդության, ջուր է խմել Աղվանաց աշխարհի թագավոր Վաչագանը: Ըստ որոշ պատմաբանների, Ավդուտ գյուղը հնում գտնվել է ուրիշ տեղում՝ արեւմուտքում, Պողոսի ամրոցի (Պողոս-դալա, որ հիմա ավերված է) մոտակայքում՝ Ավդուտ-Սկնա անվանումով եւ տեղափոխվել այժմյան տեղը: Մի առասպել պատմում է, թե ավդուտցիները տեղափոխել են ներկայիս տեղը, որովհետեւ նախկինի շրջակայքում թռչող օձ է հայտնվել: Ուրիշներն էլ ասում են, թե Ավդուտ գյուղը ինչպես կար, այնպես էլ մնացել է իր տեղում, տեղափոխվել է միայն Սկնա գյուղը: Գյուղի գերեզմանոցում 8-ից 10-րդ դարերի շիրմաքարեր կան:

Ավելի հավանական է թվում այն վարկածը, ըստ որի հանդամասերի անվտանգությունն ապահովելու համար երկու գյուղերը միավորվել են եւ ամրացել ներկայիս աշխարհագրական առավել բարենպաստ դիրք գրավող տեղում:

Աղդամի կողմից Ավդուտ-Մյուրիշենի ձորակը կարելի է մտնել միայն մի տեղով՝ գետի հունի ուղղությամբ, մնացած կողմերն անմատչելի են:

Ըստ ավանդության, ավդուտեցի մի մեծահարուստ գյուղը բաշիբոզուկների հարձակումներից պաշտպանելու նպատակով, տեղի երիտասարդությանը համախմբվել է, կազմել մի ուժեղ բռունցք, եւ կազմակերպված ձեւով վերահսկել ամբողջ ձորակի 8-9 կմ երկարությամբ եւ 6-7 կմ լայնությամբ տարածքը: Ավանդությունը պատմում է, որ այդ հիշարժան մեծահարուստ ավդուտեցին այդ նպատակի համար նվիրաբերել է 170



լուսանկար՝ Զավեն Խաչիկյանի

երինջ, 200 տակառ օղի եւ մոտ 1000 տակառ գինի:

Մինչեւ խորհրդային կարգերի հաստատումը Ավդուտ եւ Մյուրիշեն գյուղերը ծաղկել եւ բարգավաճել են:

1918-20 թվերին գյուղերի բնակչությունը կարողացել է կազմակերպել ամուր ինքնապաշտպանություն (հարյուրապետ Թեմուր Ավանեսյանի գլխավորությամբ) եւ նույնիսկ Նուրի-փաշայի զորքերը չեն կարողացել ներթափանցել գյուղերը:

Գյուղերի բաժանումն սկսվել է 20-ական թվականներից եւ շարունակվում է առ այսօր: Բավական է նշել, որ Աշխաբադում (Թուրքմենիա) ապրում են նախկին ավդուտ-մյուրիշենցիների մոտ հինգ հարյուր ընտանիք, իսկ թե ինչքան են սփռված երկրի տարբեր ծայրերում, ոչ ոք ստույգ տեղեկություններ չունի:

Ավդուտ-Մյուրիշենի ձորակը կազմում է մոտ 5,5 հազար հեկտար, որը պատված է դարավոր անտառներով, մրգատու այգիներով, ալպիական արոտավայրերով եւ վարելահողերով: Զորակով հոսում է գետակ, որը մինչեւ 50-ական թվականները աշխատեցնում էր 7 ջրաղաց (այդ թվում եւ աղբրբեջանական Գիլափլու գյուղի 3 ջրաղացը): Մինչեւ վերջին երկու-երեք տարիները ավդուտ-մյուրիշենցիների հարաբերությունները հարեւան աղբրբեջանական Գիլափլու եւ Ավդալ գյուղերի բնակիչների հետ բարեկամական էին (կարծիք կա, որ այդ գյուղերի բնակիչները մուսուլմանացված հայեր են), իսկ այժմ դրանք անջատված են անանցանելի խանդակներով: Ճիշտ է, աղբրբեջանաբնակ գյուղերի հետ ոչ մի շփում չկա, բայց պետք է ասել, որ տեղաբնակներն իրար նկատմամբ վրեժխնդրության առանձին պատճառներ չունեն, չնայած ավդուտ-մյուրիշենցիների դժգոհությունը հարուցող անասնագողությանը:

Գիլափլու-ավդալցիները պնդում են, թե իրենք մեղք չունեն, այդ ամենը եկվորների գործն է: Այնուամենայնիվ գողությունները շարունակվում են: Դեռ ավելին, Ավդալի կողմից գնդակոծվում են Ավդուտի տները, հատկապես երեկոյան ժամերին:

Ավդուտ-Մյուրիշենը ներկայումս մոտ 90-100 ծուխ ունի, բնակիչների մեծամասնությունը թոշակառուներ են: Գյուղերը զուրկ են ճանապարհներից, ջրամատակարարումից, ռադիոյան համակարգից:

Էլեկտրականությունը հաճախակի անջատվում է՝ գյուղերը պատելով խավարով:

Գազաֆիկացում չկա, չնայած գազամուղն անցնում է 2-3 կմ հեռավորությամբ: Բնակիչները գործածում են հեղուկ գազ, սակայն այն այժմ չի մատակարարվում: Գյուղերը հարուստ են պտղատու այգիներով, հատապտուղներով, բանջարեղենով, սակայն պահածոներ պատրաստելու համար անհրաժեշտ ամենատարրական հարմարություններ անգամ չկան: Երկու գյուղերին սպասարկում էր էլեկտրական մեկ ալրաղաց, սակայն արդեն մի քանի տարի է այն անգործությունից քայքայվում է՝ աղացքար չունենալու պատճառով:

Գյուղերի անտառները հարուստ են փայտանյութով, շրջակայքում կան քարհանքեր, ավազահանքեր, կավահանքեր, սակայն այդ ամենը անտեր-անտիրական է մնացել: Զորակում հոսող գետի ջրերը անօգուտ հոսում-կորչում են, հարեւան հանրապետության տարածքում:

Ամեն տարի հազարավոր տոնաներով մասուր, սաւոր, գկեռ, պնդուկ, ընկույզ, վայրի տանձ, խնձոր, մամուխ եւ այլ հատապտուղներ են փչանում անտառներում, իսկ գյուղացիները չեն կարողանում նույնիսկ իրենց այգիների մրգերը հավաքել կամ եթե հավաքում էլ են, չեն կարողանում տեղափոխել, վաճառել, դրանք փչանում են: Անցյալ տարի Արցախի տարածքում չորացան համարյա բոլոր ընկուզենիները: Ավդուտ-Մյուրիշենի ձորակը հարուստ է ընկուզենիներով, որի փայտը թանկարժեք է, սակայն տեղացիները այն օգտագործում են միայն որպես վառելափայտ:

Ասածից պարզ է, թե ինչքան բնական հարստություն կա Ավդուտ Մյուրիշենի ձորակում, սակայն այսօր գյուղացիներն ապրում են կարիքի մեջ, քանի որ սրտացավ, ձեռներեց մարդկանց կարիք, աշխատուժի պակաս ունի, չկան միջոցներ եւ մեխանիզմներ, չկա խաղաղ եւ ապահով աշխատանքի հնարավորություն, գյուղն անհուսորեն կտրված է աշխարհից: Կապը սոսկ հեռախոսն է, որի գծերն էլ, որ հատում են անտառը, քամիների ու տեղումների ժամանակ փաթաթվում են ծառերին, եղած կապը խզում:

Եթե նույնիսկ ուրիշ ոչինչ չլիներ, միայն դեղաբույսերի առատությունը կարող էր պահել այդ ձորակը, միայն թե դրա համար հնարավորություններ ստեղծվեին:

ԷԴՈՒԱՐԴ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

Խմբգր.- *Միամտություն կլիներ մտածել, որ Հայաստանում եւ ԽՄՀՄ-ում ապրող բոլոր ավդուտեցիները եւ մյուրիշենցիները կը-թողնեն ամեն ինչ ու կվերադառնան իրենց պապերի երկիրը: Սակայն վստահ ենք՝ այս հոդվածը կարդալուց հետո գեթ մի հոգի կարձագանքի ու կվերադառնա...*